

Վ.Կ. Կաթողիկոսի կիսարձանը, որ դրուած է ի ցոյց «Աշնան սալօնի» մէջ: Պարելպաճնակ մի խումբ հայեր ժողովրդական հանգանակութեամբ գնելով այն և յօրինել տալով նորա պղնձէ վերարտադրութիւնը, նուիրել են վեհափառ կաթողիկոսին որպէս երախտագիտութեան նշան և հիացման արտայայտութիւն արտասահմանի գաղութների կողմից նորին սրբութեան 85 ամեայ տարեդարձի առթիւ: Այս գաղափարն իրագործելու համար ընտրուած է մի Յանձնախումբ, իսկ հանգանակութեան մասնակցում են արտասահմանի բոլոր հայերը:

ՐԱՏԱԻՈՅԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ձեռքն ընկաւ Նոր-Ջուղայի Ամենափրկչի վանքի տըպարանում, սոյն 1904 թուին լոյս տեսած «Ճարտը տեղեկագիր հանրական ատենին յանձանձանաց Հայ ազգային հաստատութեանց Բատաւիոյ վասն 1903 ամի» գրքոյը, որ շատ խառն-ի խառն լինելով կազմած միջից հազիւ կարելի եղաւ իմանալ հետեւեալ տեղեկութիւնները:

«Հանրային ատենի հոգացողութեան ենթարկուած են հետեւեալ հայ հաստատութիւնները՝

Բատաւիայի ս. Յովհաննէս եկեղեցին, Նոյնտեղի հայոց «Մանուկ և Յարութիւն ուսումնարանը», Բատաւիայի բարեգործական «Հայկեան միաբանութիւնը», Նոր-Ջուղայի ազգ. հաստատութիւնները, այն է՝ կենդրոնական երկսեռ դպրոցները, Մ. և Յ. ուսումնարանները, Աղքատաց Արկղը, Ամենափրկչի վանքը և տպարանը, ս. Վատարինէ դպրոցը, Սանգիբարանի ս. Պօղոսի դպրոցը, ս. Մինաս և ս. Յովհաննէս եկեղեցիները:

Իժմադտաբար շատ աղօտ յիշատակութիւններ կան տեղեկագրում վերը յիշած ազգային հաստատութիւնների մասին, ինչպէս նաեւ ասուջ չեն բերուած նոցա նիւթական և բարոյական դրութեան մասին մանրամասն տեղեկութիւններ, կայ միայն մի ընդհանուր խիստ համառօտ հաշուէկշիւ, որից երեւում է, որ ս. Յովհաննէս եկեղեցին 1903 թուին մուտք է ունեցել 187910,10 լի, իսկ ծախք 95600, լի, ունի կալուածներ և դրամով 92310,10 լի:

Կ. ՆԱԵԱՆԻ ՅՕՅԵԼԵԱՆ

Ինչպէս արդէն անցեալ անգամ հաղորդել էինք, նոյեմբերի 6-ին Ս. Պ. Բուրգում կատարուել է յայտնի գրագէտ և արեւելեան լեզուների մագիստրոս Վարապետ Յ. Սգեանի պետական ծառայութեան և գրական գործունէութեան յիսնամեա յօբելեանը: